# ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրեր**

Սույն փաստաթուղթը կազմվել է Հայաստանի ՔՀԿ-ների կառուցողական երկխոսության ցանցի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից։

**ԵՐԵՎԱՆ,**
Մարտ 2020

## Ա. ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐ

I. 2018 թվականի մարտի 23-ին ընդունվել է **«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-206-Ն)**[1], որով ամբողջությամբ վերանայվել է հանրային ծառայության համակարգը, բարեփոխվել են կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն տարրեր հանդիսացող հայտարարագրման, շահերի բախման, անհամատեղելության պահանջների, այլ սահմանափակումների, բարեվարքության կառուցակարգերը:

II. Հաշվի առնելով օրենսդրական վերոգրյալ փոփոխությունները, և այն հանգամանքը, որ 2020 թվականի հունվարի 1-ից հայտարարատու անձանց կողմից հայտարարագրման առնչությամբ ներկայացվելիք տեղեկատվությունն ամբողջությամբ հնարավոր չէ արտացոլել ՀՀ կառավարության 15 դեկտեմբերի 2011 թվականի N 1819-Ն որոշմամբ հաստատված հայտարարագրերի օրինակելի ձևերի մեջ, անհրաժեշտություն էր առաջացել մշակել հայտարարագրերի օրինակելի նոր ձևանմուշներ՝ ուղղված օրենքի վերոգրյալ դրույթների ի կատար ածելուն: Այդ նպատակով 2020 թվականի հունվարի 30-ին[2] ընդունվել է **«**Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի ու հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա **գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի օրինակելի ձևերը հաստատելու** և ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու **մասին» ՀՀ կառավարության N 102-Ն որոշումը:**[3] Հարկ է նշել, որ Նախագծով առաջակվող կարգավորումները ժամանակավոր լուծում են, մինչ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը:

III. Առաջնորդվելով վերոնշյալ տրամաբանությամբ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից հանրային քննարկման է ներկայացվել **«Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու** և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու **մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը**[4]: Հանրային քննարկման ժամանակահատվածն է 22.02.2020 - 08.03.2020: Նախագիծը մշակվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությամբ:

IV. Ինչպես արդեն իսկ նշվեց, մշակվել են **«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի,** ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի **նախագծեր**[5]: Վերջիններս դրված են եղել հանրային քննարկման՝ 19.11.2019 - 05.12.2019 ժամանակահատվածում: Ներկայումս նախագծերը գտնվում են առաջարկությունների ամփոփման փուլում, և առաջիկայում կներկայացվեն ՀՀ

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138908

[2] Կառավարության նիստի օրակարգ, հունվարի 30, 2020, կետ 35, https://www.e-gov.am/sessions/archive/2020/01/30/

[3] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138716

[4] https://www.e-draft.am/projects/2306/about

[5] https://www.e-draft.am/projects/2121

կառավարություն, որպեսզի վերջինս հավանություն տա օրենսդրական նախաձեռնությանը և սահմանված կարգով ներկայացնի ՀՀ Ազգային Ժողով: Նշյալ նախագծով՝

1. Առաջարկվում է **ընդլայնել** հայտարարատու **պաշտոնատար անձանց ցանկը՝**

a) հայտարարագրման պարտականություն նախատեսել նաև **15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների** ավագանու անդամների և աշխատակազմի քարտուղարների համար:

b) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն սահմանել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամի, Երևան քաղաքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններին մասնակցող **թեկնածուների**, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վրա:

2. Առաջարկվում է **ընդլայնել** հայտարարագրման **բովանդակությունը՝**

a) Ընդլայնել հայտարարագրվող գույքը՝
   - սահմանել պաշտոնատար անձի կողմից **փաստացի պատկանող գույքը** հայտարարագրելու պահանջ,
   - տրամադրել տեղեկատվություն՝ նաև **արտասահմանում գտնվող գույքի** վերաբերյալ,
   - **նվազեցնել** Օրենքով սահմանված **թանկարժեք գույքի դրամական շեմը,**

b) Ներդնել **ծախսերի** հայտարարագրման ինստիտուտ,

c) Ընդլայնել նաև գույքի հայտարարագրման ժամանակ ներկայացվող **տեղեկատվության շրջանակը՝**
   - անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, արժեթղթերի ձեռքբերման գործարքի արժեք և գործարքի մյուս կողմ,
   - բանկային ավանդ և բանկային հաշիվ:

3. Առաջարկվում է **հզորացնել լիազոր մարմնի կարողությունները** և նախատեսել պաշտոնատար անձի կողմից լիազոր մարմնին իր անունից համապատասխան տեղեկատվության վերաբերյալ հարցումներ կատարելու մասին **լիազորագիր** տալու պահանջ՝ ՀՀ-ում և արտասահմանում պաշտոնատար անձի ունեցած ֆինանսական միջոցների բացահայտումը հեշտացնելու նպատակով:

**V.** Բացի վերոնշյալ օրենսդրական նախաձեռնությունից, մշակվել է մեկ այլ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթի ներքո:[6] Նշյալ նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1973 - Ա որոշմամբ[7] և ներկայացվել է ՀՀ ազգային ժողով, որտեղ ընդունվել է առաջին ընթերցմամբ 05.03.2020թ.[8]: Նշյալ նախագծով՝[9]

1. **Առաջարկվում է ընդլայնել հայտարարատու անձանց շրջանակը**

[6] https://www.e-draft.am/projects/1852/about
[7] https://www.e-gov.am/gov-decrees/item/33263/
[8] http://parliament.am/draft_history.php?id=11210
[9] http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11210&Reading=0:

a) Ընդլայնել հայտարարատու **պաշտոնատար անձանց շրջանակը՝** ներառելով որակավորման ստուգման գրավոր փուլին մասնակցելու համար **դատավորի թեկնածուի հավակնորդներին:**

b) Առաջարկվում է ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձի **ընտանիքի կազմը՝** ամուսին, զավակ (այդ թվում՝ որդեգրված), խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձին, ՀՀ ռեզիդենտ ծնող, քույր և եղբայր, համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:

2. Առաջարկվում է **հզորացնել լիազոր մարմնի կարողությունները**

a) **Ներդնել** փոխկապակցված անձանցից գույքի և եկամուտների **իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու ինստիտուտ** այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի գույքի էական փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ,

b) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրել հայտարարատու պաշտոնատար անձանց՝ **բանկային, առևտրային և ապահովագրական գաղտնիքի** վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու հնարավորության:

## Բ. ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. **«Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու** և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» **ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**

1. «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագրում (2018-2020) թվականների համար սահմանված է հետևյալը. *«Կարգավորման ենթակա խնդիրը: Հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը (հայտարարագրերի բովանդակությունը) մեծ մասամբ հնարավորություն չի ընձեռում բացահայտելու նվիրատուի և հայտարարատուի միջև առկա կապը: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշմանը համապատասխան՝ նվիրատուի վերաբերյալ տվյալները ենթակա չեն հրապարակայնացման: Առկա է երրորդ անձի տվյալների պաշտպանության խնդիրը: Արդյունքում՝ հանրության շրջանում առաջ են գալիս տարաբնույթ կասկածներ և մեկնաբանություններ: Մինչդեռ, եթե հանրությանը հասանելի լինեն նվիրատուի անվան/անվանման, ինչպես նաև հայտարարատուի հետ վերջինիս կապի մասին տվյալները, նշված կասկածները կփարատվեն: Բացի դրանից, նվիրատու երրորդ անձի անձնական տվյալների պաշտպանության առումով, նրա անվան վերաբերյալ հայտարարագրված տվյալների հրապարակայնացումը ենթադրում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված վերաբերելի կարգավորումների հստակեցում: (…) Պարտավորության հակիրճ նկարագրությունը: հայտարարագրերի բովանդակության վերանայում, այդ թվում՝ (…) հայտարարատու պաշտոնատար անձի հետ նվիրատուների նույնականացման (հայտարարատուի հետ կապի բացահայտման) վերաբերյալ տվյալների՝ հայտարարագրման ենթակա լինելու առումներով: (…) Ընթացիկ գործողություններ: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ հայտարարագրերի բովանդակության վերանայման, այդ թվում՝ (…) նվիրատուների նույնականացման (հայտարարատուի հետ կապի բացահայտման) համատեքստում: ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ»:*[10] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը որպես եկամտի տեսակ ներառում է նաև նվիրատվությունները, իսկ սույն նախագծի վերլուծությունից պարզ է դառնում, որ հրապարակման են ենթակա եկամտի տեսակը և եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը: Վերոնշյալ նորմերի համադրումից հանգում ենք այն եզրակացության, որ ԲԿԳ ծրագրով նախատեսված պարտավորությունը կատարվում է մասնակի, քանի որ հասարակությանը շարունակում է հայտնի չլինել **նվիրատու և հայտարարատուի միջև կապի բնույթը,** նվիրատվության պատճառներն ու հիմքերը:
2. Սույն նախագծով սահմանվում է, որ հրապարակման են ենթակա հայտարարատու պաշտոնատար անձին, նրա խնամակալության և հոգաբարձության տակ գտնվող անձանց սեփականության իրավունքով պատկանող՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա **էլեկտրոնային հաշիվները և կրիպտոարժույթը:** Գտնում ենք, որ նման կարգավորումների նախատեսմանը զուգահեռ

[10] https://www.ogp.am/u_files/file/4th_edited_2019.pdf

անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելով, թե ինչ է կրիպտոարժույթը։

3. Սույն նախագծով շարունակվում է հասանելի չլինել **անշարժ գույքի** բնութագրիչ տվյալներից որոշակի տվյալներ, ինչպիսին օրինակ վերջինիս **գտնվելու վայրն** է։ Մինչդեռ, գույքի գտնվելու վայրը կարող է էականորեն ազդել գույքի արժեքի վրա։ Հաշվի առնելով հայտարարատու պաշտոնատար անձանց անհատական տվյալների պաշտպանության հարցը, մի կողմից, և հանրային շահը՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, գտնում ենք, որ անհրաժեշտ է առնվազն հրապարակել անշարժ գույքի գտնվելու համայնքը և վարչական շրջանը։
4. Թեև սույն նախագծով տրանսպորտի ձեռքբերման ամսաթիվը դարձել է հրապարակային տվյալ, սակայն վերոնշյալը բավարար չէ՝ տրանսպորտի ձեռքբերման արժեքը պարզելու տեսանկյունից, քանի որ բացակայում է **տրանսպորտի արտադրման արժեքը**։ Առաջարկում ենք հրապարակել նաև վերոնշյալ տվյալները։

## II. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. Թեև նախագծով ընդլայնվում է հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շրջանակը, այնուամենայնիվ մենք վերահաստատում ենք մեր դիրքորոշումը, որ ապօրինի հարստացման դեմ արդյունավետ պայքարելու տեսանկյունից խիստ կարևոր է **բոլոր հանրային ծառայողների նկատմամբ հայտարարագրման պարտավորությունը տարածելը։** Նախնական փուլում առաջարկում ենք հայտարարագրման պարտավորությունը տարածելը պաշտոն զբաղեցնող անձանց վրա, մասնավորապես՝ քաղաքական պաշտոններ՝ 15.000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքների ղեկավարներ, նրանց տեղակալների, աշխատակազմի քարտուղարների և ավագանու անդամների, վարչական պաշտոններ՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների, հայեցողական պաշտոններ՝ համայնքի ղեկավարի խորհրդական, մամուլի քարտուղար, օգնական, համայնքների ղեկավարի տեղակալի օգնական, Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների օգնականի համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետներ, ինչպես նաև համայնքային ծառայության գլխավոր և առաջատար պաշտոն զբաղեցնող անձանց և քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների բոլոր ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ,
2. Առաջարկվում է **վերանայել ծախսերի հայտարարագրման համակարգը**՝
   a) Ձևակերպումն անհստակ է, արդյո՞ք ծախսերը պետք է կատարված լինեն միայն հայտարարատուի կողմից, թե՝ վերջինիս հետ փոխկապակցված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող այլ անձի կողմից ևս։ Առաջարկվում է հստակեցնել նշյալ դրույթը։
   b) Ո՞րն է տնտեսագիտական կամ այլ հիմնավորումը, որ նախագծում որպես շեմ սահմանվում է 300.000 ՀՀ դրամը։ Անհստակ է, թե ինչպես է այն հաշվարկվել։ Այս կապակցությամբ հարկ է նշել, որ նույնիսկ նախագծի հիմնավորվմամբ ներկայացված միջազգային փորձը նախատեսում է շուրջ 250.000 ՀՀ դրամ (500 ԱՄՆ դոլար)։ Առաջարկվում է նախատեսել տնտեսագիտական հիմնավորումը։
   c) Ո՞րն է տնտեսագիտական կամ այլ հիմնավորումը, որ նախագծում որպես շեմ օգտագործվում է երեք հարյուր հազար դրամը, իսկ առաջարկվող հոդված 40.1-ի 2-րդ

մասի 7)-րդ ենթակետում օգտագործվում է 1.000.000 ՀՀ դրամը: Առաջարկվում է բոլոր ենթակետերում նախատեսել միևնույն ֆինանսական շեմը:

d) Արդյո՞ք հայտարարագրման համար անհրաժեշտ է սահմանված շեմը գերազանցող ծախսերի միանվագ կատարում, թե՝ մեկ տարվա ընթացքում կատարված միանվագ ծախսերի համագումար: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ պաշտոնատար անձինք պարտավոր են հայտարարագրել օրենքով նախատեսված շեմը գերազանցող ոչ թե միանվագ ծախսերը, այլ՝ տարվա ընթացքում դրանց հանրագումարը, երբ գերազանցվում է սահմանված շեմը: Նման կարգ գործում է, օրինակ, Լիտվայում: Առաջարկվում է նախագծով նախատեսել համանման կարգավորում:

e) Ծախսերի մեջ նախատեսված չեն ապրուստը հոգալու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերը (սնունդ, ճանապարհածախս, կոմունալ վճարումներ…): Դրանց բացակայությունը հնարավորություն չի տալիս իրականացնել հայտարարագրերի բազմակողմանի վերլուծություն և վերահսկել դրամական ներհոսքն ու արտահոսքը: Միջազգային փորձում վերջինիս սահմանումը ևս ընդունված պրակտիկա է[11]: Անհրաժեշտ է նախագծով նախատեսել համանման կարգավորում, ինչպես նաև սահմանել, որպեսզի վիճակագրության կազմման հարցերով զբաղվող ՀՀ լիազոր մարմինը կազմի միջին ցուցանիշներ տարբեր կարգեր զբաղեցնող պաշտոնատար անձանց կողմից ապրուստը հոգալու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի վերաբերյալ:

3. Քանի որ «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է սահմանել նաև պաշտոնատար անձանց **կրիպտոարժույթների** և էլեկտրոնային հաշիվների հայտարարագրման պարտականություն, սակայն ՀՀ օրենսդրությամբ վերոնշյալ սահմանումները տրված չեն, առաջարկվում է նախագծով դրանք սահմանել:

4. «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագրում (2018-2020) թվականների համար սահմանված է հետևյալը. *«Նվիրատու երրորդ անձի անձնական տվյալների պաշտպանության առումով, նրա անվան վերաբերյալ հայտարարագրված տվյալների հրապարակայնացումը ենթադրում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված վերաբերելի կարգավորումների հստակեցում»:* Ի կատարումն սույն գործողության, նախագծով նախատեսվել է մի շարք տվյալների հրապարակայնություն, սակայն առկա չէ «**Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով** ամրագրված վերաբերելի կարգավորումները հստակեցնող նախագիծ:

5. Պաշտոնատար անձի կողմից լիազոր մարմնին իր անունից համապատասխան տեղեկատվության վերաբերյալ հարցումներ կատարելու մասին **լիազորագիր տալու** պահանջի վերաբերյալ **կարգավորումը**՝ ՀՀ-ում և արտասահմանում պաշտոնատար անձի ունեցած ֆինանսական միջոցների բացահայտումը հեշտացնելու նպատակով, մեր խորին համոզմամբ խիստ **խնդրահարույց է:**

a) Նախագծի հիմնավորմամբ ներկայացված չէ որևէ երկրի միջազգային փորձ խնդրո առարկայի վերաբերյալ:

b) Ինչպիսի երաշխիքներ են նախատեսված, որ այլ պետություններում գտնվող բանկերը բանկային գաղտնիք համարվող տեղեկությունը կտրամադրեն նման քաղաքացիաիրավական լիազորագրի հիման վրա: Ավելին, նշված չէ, արդյոք ՀՀ-ն այլ

[11] http://tilman-hoppe.de/CoE_Practitioner_manual_on_analysing_declarations-EN.pdf, p25

երկրների հետ ունի փոխադարձ օգնության այնպիսի գործիքազմ, որը հիմք կհանդիսանա իրավապահ մարմին չհանդիսացող մարմնին տրամադրել նշյալ տեղեկատվությունը։

c) Մեկ այլ մտահոգություն վերաբերվում է այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիաիրավական օրենսդրության համաձայն՝ լիազորագիրը տրվում է այլ անձի, իսկ նախագծով նշվում է՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին։ Հարց է առաջանում, թե կոնկրետ ում անունով է տրվելու լիազորագիրը։ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի կամ անդամներից որևէ մեկի անունով լիազորագրի տրամադրումը ևս չի լուծի խնդիրը, քանի որ վերջիններս պաշտոնավորումն իրականացնում են օրենքով նախատեսված ժամկետում, և նման կարգավորումը կարող է նման դեպքերում վերջինների լիազորությունների չարաշահման հնարավորություն առիթ դառնալ։

Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է նախ լուծել վերոշարադրյալ խնդիրները, այնուհետև միայն քննարկել նման լիազորագրի տրամադրման նպատակահարմարությունը։

6. Նախագծով ընդլայնել նաև պաշտոնատար անձանց «**ընտանիք**» եզրույթը՝ նախատեսելով նաև պաշտոնատար անձի մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված հետևյալ անձանց՝ ամուսնու ՀՀ ռեզիդենտ ծնողին, զավակին, եղբորը և քրոջը, ինչպես նաև սանիկ-քավոր հարաբերություններում գտնվող անձանց։
7. Առաջարկվում է փոփոխություններ կատարել հայտարարագրման ոլորտի **պատասխանատվություն սահմանող կարգավորումներում**՝
   a) Նախագծի հարակից իրավական ակտերի գործող կարգավորումները («Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 169, մաս 5 և ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 314.3) հնարավորություն են տալիս հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու դեպքում խուսափել քրեական պատասխանատվությունից՝ որակելով նշյալ արարքները որպես Հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը, որի համար սահմանված է առավել մեղմ՝ վարչական պատասխանատվություն։ Ավելին, բացակայում են որևէ ուղեցույցներ, որոնք կկարգավորեն, թե որ դեպքում է արարքն ընկնում վարչական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների ներքո, իսկ որ դեպքում՝ քրեական։ Հարկ է նաև ընդգծել, որ քրեաիրավական կարգավորումներում նախատեսված է հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու պարտավորություն, իսկ վարչաիրավական կարգավորումներում չեն կատարվել համապատասխան փոփոխություններ, և փաստաթղթում շրջանառվում է գոյություն չունեցող մարմնի՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անվանումը։ Ուստի, առաջարկվում է վերանայել վերոնշյալ կարգավորումները՝ սահմանափակելով հայեցողության հնարավորությունը, բացի այդ մշակել նշյալ ուղեցույցները։
   b) Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կողմից հայտարարագրման խախտումներ կատարվելու դեպքում պատասխանատվության է ենթարկվում պաշտոնատար անձը, ոչ թե՝ խախտում կատարած ընտանիքի անդամը։ Առաջարկվում է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխությունները, և նման խախտումների դեպքում որպես սուբյեկտ դիտել խախտում կատարած ընտանիքի անդամին։
8. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ունի հայտարարագրերի վերլուծության մի շարք լիազորություններ, սակայն գտնում ենք, որ նշյալը բավարար չէ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու տեսանկյունից։ Գործող օրենսդրությամբ ձեռնարկատիրական գործունեության որոշ ոլորտներ չեն կարգավորվում, ինչպես օր.՝ հողագործությունը։ Հետևաբար, պաշտոնատար անձը կարող է հայտարարագրում նշել, որ իր եկամտի աղբյուրը հողագործությունից, և դժվար կլինի ստուգել դա։ Մեկ այլ օրինակ է,

երբ պաշտոնատար անձը չի հայտարարագրում իր կողմից փաստացի տիրապետվող գույքը, կամ հայտարարագրված անշարժ գույքի արժեքը մի քանի անգամ հեռու է իրականությունից: Միջազգային պրակտիկայում, օրինակ՝ Ֆիլիպիններ, Կոսովո, նշյալ խնդիրների լուծման նպատակով մշակվել են **կյանքի որակի ստուգման մեխանիզմներ** (**life style checks**), որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը հայտարարագրված և իրական գույքի և եկամուտների տարբերությունները վերհանելու գործընթացում[12]:

9. Թեև նախագծով առաջարկվում է փաստացի տիրապետվող գույքը ևս հայտարարագրելու պարտավորություն, սակայն գտնում ենք, որ առաջարկվող կարգավորումները թերի են և վերանայման կարիք ունեն: Մասնավորապես, ի տարբերություն սեփականության իրավունքով պաշտոնատար անձին պատկանող գույքի բնութագրիչ հատկանիշներին, փաստացի տիրապետման գույքի պարագայում դրանց վերաբերյալ օրենսդրական պահանջ սահմանված չէ: Նման կարգավորումներ չեն տրվում նաև «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու (…) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով: Սակայն, այս պարագայում ևս անհրաժեշտ է հայտարարագրել **փաստացի տիրապետման գույքի գտնելու վայրը, մակերեսը, ձեռք բերման ամսաթիվը, գործարքի մյուս կողմին**, որը հնարավորություն կտա բացահայտել այն իրավիճակները, երբ գույքի նոմինալ սեփականատերն իրականում պաշտոնատար անձն է: Ուստի, առկա է համապատասխան փոփոխությունները կատարելու անհրաժեշտություն:

[12] http://tilman-hoppe.de/CoE_Practitioner_manual_on_analysing_declarations-EN.pdf, p. 39.

## Գ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ
## I. ՆԱԽՈՐԴ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

### 1. Ընդունված առաջարկներ

a) Հայտարարատու **սուբյեկտների** շրջանակի շարունակական ընդլայնում՝
- **Պաշտոնատար անձանց** շրջանակի շարունակական ընդլայնում՝
  - «Հանրային ծառայության մասին» 2011թ.-ի ՀՕ-172-Ն օրենքի իմաստով՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց շրջանակում ՀՀ քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի և նրա տեղակալների ներառում[13]
  - «Հանրային ծառայության մասին» 2011թ.-ի ՀՕ-172-Ն օրենքի իմաստով՝ բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող հետևյալ պաշտոնատար անձանց ներառում[14]
  - «Հանրային ծառայության մասին» 2018թ.-ի ՀՕ-206-Ն օրենքի իմաստով՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակի ընդլայնում (մասնավորապես՝ հայեցողական պաշտոնների նախատեսում, այդ թվում՝ մի շարք պաշտոնատար անձանց խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների ներառում), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների տեղակալների և Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների տեղակալների ներառում և այլն:
- Պաշտոնատար անձանց «**ընտանիք**» եզրույթի շարունակական ընդլայնում՝ պաշտոնատար անձանց անչափահաս զավակի (այդ թվում՝ որդեգրված), խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի և համատեղ բնակվող յուրաքանչյուր անձի ներառում

b) Հայտարարագրման **բովանդակության** շարունակական ընդլայնում՝
- Հայտարարագրման ենթակա գույքի սահմանակումների վերացում,
- Շահերի հայտարարագրման համակարգի ներդրում,

c) Հայտարարագրման ոլորտում **պարտավորությունների** սահմանում՝
- Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնը ստանձնելիս և պաշտոնը դադարեցնելիս վերջինիս ընտանիքի անդամների կողմից հայտարարագրեր ներկայացնելու պարտավորության սահմանում,

---

[13] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=118522

[14] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=114359, քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, ՀՀ ԱԺ աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, ՀՀ արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար և աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ղեկավար, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ քննչական կոմիտեում ծառայության, ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալը, ՀՀ նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարները և նրանց տեղակալները, դատական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, հատուկ ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, բացառությամբ պաշտպանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում և փրկարար ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձանց, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, դատախազները, ազգային անվտանգության մարմինների, հարկային, մաքսային ծառայությունների, քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչները, 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարները, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները, գնումների բողոքարկման խորհրդի անդամները:

- Հայտարարատու պաշտոնատար անձանց կողմից կանխիկ դրամով կատարվող գործարքների սահմանափակումների նախատեսում՝ կեղծ փոխառություններ ձևակերպելու արատավոր պրակտիկայի դեմ պայքարելու նպատակով,
- Հայտարարատու պաշտոնատար անձանց համար իրենց և ընտանիքի անդամների հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու, հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական կամ կեղծ տվյալներ ներկայացնելու համար վարչական և քրեական պատասխանատվության սահմանում,

d) Հայտարարագրման վերլուծությամբ զբաղվող **լիազոր մարմնի կարողությունների հզորացում՝**
- Հայտարարագրերը վերլուծելու գործիքակազմի տրամադրում՝ հայտարարագիր լրացնելու և ներկայացնելու պահանջների պահպանման ստուգում, հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, հայտարարագրված տվյալների մաթեմատիկական վերլուծություն, ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն:
- Հայտարարագրերի վերլուծության գործընթացում հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ գտնվող անձանց առնչվող տեղեկությունների, փաստաթղթեր այլ մարմիններից պահանջելու և ստանալու իրավասության տրամադրում, բացառությամբ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:

Ինչպես նաև հայտարարագրման վերաբերյալ միջոցառման նախատեսում՝
- «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագրում (2018-2020)[15],
- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում:[16]

## 2. Առաջարկներ, որոնց ընդունումը գտնվում է կատարման փուլում

a) Հայտարարատու **սուբյեկտների** շրջանակի շարունակական ընդլայնում՝
- **Պաշտոնատար անձանց** շրջանակի շարունակական ընդլայնում՝ 15.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների և աշխատակազմի քարտուղարների ներառում:
- Պաշտոնատար անձանց «**ընտանիք**» եզրույթի շարունակական ընդլայնում՝ ՀՀ ռեզիդենտ ծնողին, քույրի և եղբայրի ներառում:

b) Հայտարարագրման **բովանդակության** և **հրապարակման ենթակա տվյալների** շարունակական ընդլայնում՝
- Անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, արժեթղթերի ձեռքբերման գործարքի արժեքի և գործարքի մյուս կողմի վերաբերյալ տվյալների ներառում, ներառյալ՝ նվիրատվության դեպքում,
- Թանկարժեք գույքի դրամական շեմի նվազեցում,
- Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում,
- Բանկային ավանդի, վարկերի և փոխառությունների՝ որպես առանձին տվյալների ներառում,
- Դրամական միջոցների բնութագրիչ հատկանիշների վերաբերյալ տվյալների ներառում՝ ըստ կանխիկ դրամի, բանկային հաշվի, կրիպտոարժույթի և էլեկտրոնային հաշիվների և այլ տվյալների,

[15] https://www.ogp.am/u_files/file/4th_edited_2019.pdf, կետ 1:
[16] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876, Հավելված 2, կետ 17:

- Արժեթղթերի և այլ ներդրումների բնութագրիչ հատկանիշների վերաբերյալ տվյալների ներառում, այդ թվում՝ ընկերության լրիվ անվանումը, դրանց արժեքը, արժույթը, բաժնեմասնակցության %-ը և այլն,
- Հայտարարագրերի ռեեստրի ինտերակտիվ (որոնման համակարգի հնարավորությամբ) գործիքի ներդրում:

c) Հայտարարագրման համակարգի **լիազոր մարմնի կարողությունների հզորացում՝**
- Իրավիճակային հայտարարագրման ինստիտուտի ներդրում,
- Հայտարարատու պաշտոնատար անձանց՝ բանկային, առևտրային և ապահովագրական գաղտնիքի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու իրավասության տրամադրում:

## II. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրներն ու իրականացվող բարեփոխումները», քՎանաձոր, 2016թ. հոկտեմբերի 12, Վանաձոր քաղաք, կազմակերպված՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում ՀՀ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աջակցությամբ:

## III. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- «Բարձրաստիճան պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի խնդիրները. Ամփոփում», 2016թ.[17]
- «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն»[18],
- «2019-2022 թվականների ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության հայեցակարգային դրույթներ»:[19]

[17] https://armla.am/37622.html
[18] https://armla.am/37598.html, Տես գլուխ 2, գլուխ 3՝ մաս 3, կետ 5:
[19] https://armla.am/38265.html Տես գլուխ 2, կետ 12: